ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[illegible]ԾՁԲ-24/11 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով բջջային հեռախոսակապի ծառայության գնման [illegible] հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 06.12.2023թ. ժամը 14:30-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան
Հանձնաժողովի անդամ՝ Արմենուհի Մադաթյան
Լիանա Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ | corp_tender@telecomarmenia.am |
| 2 | «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ | a.izrailyan@gmail.com |

**3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ իրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել են իրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

| Չ/բ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ | | «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ | |
| | | Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1000000 | 832500 | 999000 | 833333 | 1000000 |

**5. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը իրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի իրավերի 8.9 կետով սահմանված ժամկետում ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 18.12.2023թ**

**6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

6.1 **«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ –ի կողմից** ներկայացված հայտում առկա են իրավերով պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են իրավերով սահմանված պայմաններին,

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ** -ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել **«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի** հայտը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**8. Գնահատման արդյունքների մասին**

8.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գրանտային հանձնաժողով

---------------------------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------------------------- Արմենուհի Մաղաքյան

---------------------------- Լիանա Հարությունյան

---------------------------- Լիանա Խառատյան /քարտուղար/